

**Համաձայն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2008թ-ի դեկտեմբերի 30-ի թիվ 373-Ն որոշման 50-րդ մասի 10-րդ կետի պահանջի, բացահայտում են «Շեն-Կոնցեռն» ՓԲԸ-ին վերաբերող հետևյալ էական տեղեկությունը՝**

«Շեն-Կոնցեռն» ՓԲԸ-ն դիմել էր դատարան Ընկերության բաժնետեր Արա Արամայիսի Հասրաթյանի հետ 24.06.2008թ-ի անտոկոս նպատակային փոխառության պայմանագրով տրամադրված գումարի չվերադարձված մասի՝ 234930576 դրամի և դրա վրա կետանցման օրվանից մինչև պարտավորության դադարման օրը հաշվարկված տոկոսների բռնագանձման մասին:

Վերոնշյալի կապակցությամբ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք – Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը բավարարել է Ընկերության հայցը և 2010թ-ի փետրվարի 18-ին կայացրել է վճիռ, որի էական մասերը բացահայտվում են ստորև.

Արա Արամայիսի Հասրաթյանից հօգուտ «Շեն-Կոնցեռն» ՓԲԸ բռնագանձել 234930576 դրամ, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի կիրառմամբ սկսած պարտավորության կետանցման պահից՝ 24.06.2009թ-ից 234930576 դրամ գումարի վրա հաշվարկել տոկոսներ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի բանկային տոկոսի հաշվարկային դրույքի՝ տոկոսի բռնագանձումը շարունակելով մինչև պարտավորության դադարման օրը:

Վճիռը կարող է բողոքարկվել ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարանին հրապարակման պահից մեկ ամսվա ընթացքում: